որ տալիս է «յարքունեացն «տէր» երիցս այսոցիկ աշխարհաց»:

Բոլխար այն անձն է որ Ափշինից յետոյ կուսակալ եկաւ, Մուհամմեթ իբն Խալիդ Բուխարա Խոդահ: (Փատդոս կամ Պատդոս նոյնն է ինչ որ պատդոսպան եւ նշանակում է կուսակալ):

Աւելորդ չէ յիշել, որ Բաղդդի կուսակալից յետոյ Կաղանկատուացին անուանում է «խաղը պատդոս այր չամրչոտ եւ անողորմ», որին յաջորդում է իր որդին, այն որ վերաշինում է Գանձակ քաղաքը:

Մարկուարտ կարծում է, որ այս երկու կուսակալները անծանօթ են արաբ հեղինակներին, մինչդեռ սրանք ոչ այլ ոք են բայց եթէ նշանաւոր Խալիդ Շայբանի եւ իր որդի Մուհամմեթ: Խալիդ կուսակալ էր Հայաստանի Բաղդիսից յառաջ 827–832 տարիները, եւ նորէն եկաւ Բուխարա Խոդահից յետոյ եւ մեռաւ ըստ Ասողիկի հ. թ. 290=841–2 թուին, եւ նրան յաջորդեց որդին Մուհամմեթ:

Աղուանից պատմագիրը ամփոփ նախադասութեան մէջ ձուլել է Շայբանի իշխանի կըրկնակի կուսակալութեան տարիները եւ դրել Բաղդից յետոյ, անյիշատակ թողնելով միջանկեալ կուսակալներին:

Սահլ Սմբատեան իշխանը սկզբում կենդրոնական իշխանութեան դէմ էր, յետոյ մատնելով Բաբակին անցաւ ամիրապետի կողմը: Աղուանից պատմիչը մի տեղ նրան կոչում է Եռանշահիկ, իսկ նոր հատուածում Զառմիհրական: Հակասութիւն չկայ: Միհրական տան ենթադրեալ նախնիքներից Վարդան քաջ, ըստ նոյն պատմագրի, սպանել էր Եռանշահիկ հին տոհմի բոլոր անդամներին, խնայելով միայն Զառմիհրին, որին եւ տուել էր իր դուստրը կնութեան: Սմբատեան Սահլը, ուրեմն, այս Զառմիհրի սերնդից է համարւում: Հակառակ պատմագրի մեկնութեան, հաւանական համարեցինք վերեւ Սահլի Բագրատունի ծագումը:

Թովմա Արծրունին Սահլին անուանում է Շաքէոյ տէր: Եթէ Շաքէով հասկանալու է Նուխուայ շրջանը, ապա ուրեմն հ. թ. 270: 821 թուից յետոյ, երբ նա կռւում էր արաբների դէմ Մեծ Իրանց գաւառում, Տրտու (այժմ Թառթառ) գետի հովտում, բաւականին ընդարձակել էր իր իշխանութեան սահմանները: Օգտուելով Բաբակի խառնակութիւններից, թերեւս, եւ նրա բարեկամութիւնից, Սահլ հռչակել էր իրեն անկախ տէր Առանի եւ այնքան զօրաւոր էր, որ կարող էր ոչ միայն ճակատել, այլ եւ յաղթել արաբական 12 հազարանոց հեծեալ բանակը, որ Մուհամմեթ իբն Սոլիման ալ–Ազդիի հրամանատարութեամբ եկել էր նրան սանձելու:

Սակայն, Սահլ շուտով փոխեց իր դիրքը եւ խոնարհեց ամիրապետի գերիշխանութեան առաջ: Պատճառն, անշուշտ, այն անցքերն էին, որ պատահեցին արեւմտեան սահմաններում, տապալելով ակնկալած յոյսերը:

* * *

Բաբակի խռովութիւնները պատեհ առիթ էին, որ Թէոփիլ կայսրը մի անգամ եւս փորձէր իր դէնքի ոյժը Արեւելքում:

Գուցէ անհիմն չէ այն կասկածը, որ նա էր դաղտնի սադրիչը Բաբակի: Սրա յարաբերութիւնները կայսեր հետ ամէն պարագային անտարակոյս են: 837 թուին կայսրը շարժուեց ահագին բանակի գլուխն անցած: Եկաւ եւ աւերեց Հայաստանը: Մելեսենիէ կողմից մտաւ Հանձիթ, առաւ Աշմուշատ քաղաքը, անցաւ Մանձկերտ, Խոշան, Կարին, Սպեր: Հարկ պահանջեց Թէոդուպոլսիցիներից, այսինքն՝ Կարին քաղաքից:

Միքայէլ Ասորին հաւատացնում է, որ կայսրը սպառնալիք դրկեց Մեծ Հայք, պահանջելով հարկ, որ հակառակ դէպքում երկիրը կ'աւերէ: Ի լրումն չարութեան «դերեաց զրաղումս ի հայոց հանդերձ ընտանեօք իւրեանց» եւ անցաւ Խաղտիք, որ դառնայ մայրաքաղաք, յաղթական պսակը գլխին:

Այս երկիրներից արաբներին պատկանում էր միայն Հանձիթ, Արածանից հիւսիս գտնըւում էր աւելի բիւզանդական քան արաբական իրաւասութեան տակ: Բայց եւ այնպէս Թէոփիլին հաճելի էր կշիռ տալ իր արշաւին եւ ոչնչել իր նուաճումները: Երբ մայրաքաղաք մտաւ, դեռատի մանուկները շարան շարան ընդ առաջ ելան ծաղկէ փնջերով եւ պսակներով. ամբոխը աղաղակում էր՝ «ողջամբ եկար, անզուգական ախոյեան»:

Արշաւանքի գործնական արդիւնքն այն ե-